

ԲԱԺԱՆՈՒՄ ԿՐԻՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար

Տարեկան	12 Ժր.
Վեցամսեայ	6 »

Արտասահմանի համար

Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ամերիկայի համար

Տարեկան	3 Ժր.
Վեցամսեայ	1.50 »

ՎԱՆՆԻՆՆԻ ՎՃԱՐՆԷԼԻ

Մ. Նուզման սոյր՝ առաջին հրեային համար 40 սակրիկ հ. իսկ վերջին հրեային համար 20 սակրիկ հ. հրեային առաջին սակրիկներու համար 20 սակրիկ կրնայ:

Վառնայի համար ձեռք 10 սակրիկ

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Համակ եւ գրակ գրկեղ կարգադրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Իրութեան եւ շնորհակալութեան

Արտասահմանի ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռք
≈ 15 ՍԱՆԹԻՄ ≈

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Դշխառն գործակալ

ՊՈՒՂԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԵՆԻ ԵՐԱՇՆՈՒՄԻՆԻ ԱՍՏԻՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փոփոխողները կրնան իրեն գիմել:

Զար-Պորիս փողոց Վառնա

ԶԵԿՈՅՑ

Պատիւ ունիք յայտարարելու թէ՛ Տիկին Եւ Տիար Զօրեանցի հիմնարկած վարժարանը իր երկրորդ տարեշրջանը պիտի սկսի յայտնաբերելու Սեպտեմբեր 3 ին, այս անգամ բարձրագոյն երկսես նախակրթարանի մը լայն ու մշակեալ ծրագրով: Եւ այս օրերէն ելնող աշակերտները պիտի կրնան պետական կրթականներէն ընդունուիլ: Վարժարանը ունի նաեւ իր կանոնաւոր մանկապարտէզը:

Վարժարանի ուսուցչական խումբը արդէն կազմուած է. որ իր մշակած ծրագրի, իր ընդունած մանկավարժական ուղղութեան եւ կազմակերպութեան մասին հարկ եղած ծանօթութիւնները պիտի ապահովեն: Սեպտեմբերի սկիզբները մասնաւոր հրատարակութեամբ մը

իրենց գաւակները արձանագրել տալ ուղղ ծնողներէն կը խնդրուի որ Օգոստոս 10 էն սկսած հաճին վարժարանի ուսուցչներէն Տ. Կ. Պիտեանի գիմել եւ անոր հետ բանակցել պայմաններու մասին:

Ուրիշ քաղաքներէ եւ աշակերտ կրնողներէն, զանոնք պատուաւոր ընտանիքներու մէջ տեղաւորելու եւ անոնց վարք ու բարքին վրայ հսկելու հոգը ստանձնելով:

ՈՒՍՈՒՆ ԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հասցէ

G. Bionian Instituteur — Philippople

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Sof. Վ. Տոմսակցի եւ Ե. Թոփչեանցի „Die sozial-ökonomisch Türkei“

Հասարական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Եւրոպայի մասին:

Գիմելը 2 մարկ ճանապարհածախսով գիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔԸ

Այն օրէն երբ կարելի եղաւ հանրային հեղինակութիւնը մասնաւոր ու թագակիր հեղինակութիւններէն զերպանց համարել, հանրային կարծիքն ալ իր արժանաւոր ձայնն ու ազդեցութիւնը կարողացաւ ձեռք բերել: Անիկա արժատական իշխանութիւններ տապալեց, դարեւոր նախապաշարութեան խորտակեց, մեծապօր անհատներու կամքը չեղոքացուց իր անհղ կամքը հարկադրելով անոր, անխառն ուսմանը բարձրացուց ու հանրութիւնը շահագործող խաբեաները գիմակապէս ըրաւ: Հանրային կարծիքին տիրապետումը, մէկ խօսքով փրկութիւն մը եղաւ մարդկութեան համար, որ դարեւոր ընթացքին մէջ անարգ գիւրիւն եղած էր անհատներու բռնութեան, դաւերուն փառասիրութեան եւ ամենացած կիրքերուն:

Դեղեւուն, վարանտ ու անտոյզ իր ստալին քայլերուն մէջ, հանրային կարծիքը եւրոպայի մէջ, հետզհետէ զօրացան, ինքզինքնին գիտակցութեան տիրացաւ շնորհիւ անկեղծ ու ազատ մամուլին քարոզութեանց եւ ժողովրդին ստացած դաստիարակութեան: Եւ այսօր անիկա միակ հզօրագոյն ուժը դարձած է, որ մէկ հարուածով կը խորտակէ վեհապետներու կամքութիւնները, կարհամարհէ անոնց անիրաւ ու վնասակար հրամանները ճամբայ եւ ուղղութիւնը կը ցուցնէ իշխանութեանց եւ անոնց իր կամքը կը պարտադրէ: Անիկա չի գիտեր կաշառուիլ եւ չի վախնար շեղումներէ: պարզափայտօր, անտեթեւեթ իր արժանաւորութեան մէջ՝ հանրային կարծիքը իրականութիւնը իսկոյն ըմբռնելու եւ իր կամքն ու պահանջը անոր յարմարեցնելու հրաշայի ընդունակութիւնն ունի, ու գրեթէ երբեք չի պիտի սխալի, եթէ զայն մոլորեցնողներ չըլլան: Եւ այդ մոլորումն իսկ ժամանակաւոր է, եւ առաջին ցըն-

ցումով ուղղուելու կարող: Հասարակաց կարծիքը սանձ մը եւ զած է այժմ եւրոպայի մէջ, բոլոր հասարակական գործիչներու համար, որոնք չեն ուզեր իրենց վայելած հանրային յարգանքը կորսնցնել, եւ այդ պատճառով միշտ կը ջանան ուղղութեամբ եւ անկեղծօրէն ընթանալ իրենց գործերուն մէջ:

Սակայն հանրային կարծիքը այնքան զօրաւոր չէ կրցած ըլլալ տակաւին մեզ նման երկրորդական ազգերու մէջ: Ժողովուրդը պէտք եղածին չափ դաստիարակուած ու լուսաւորուած չէ գեռ իր սեփական, անխախտ համոզումներն ու հասարկ ունենալու համար: Իսկ մամուլը անկողն ու անարժան ձեռքերու մէջ, իր կոշման ու պաշտօնին զլլալին հակընդդէմ ներգործութիւն մը կը փութայ ունենալ հասարակութեան վրայ: Հասարակաց կարծիքը, արդէն իսկ անկայուն ու յեղիշուկ, ամէն վայրկեան կը տատանի այս կամ այն ազդեցութեան տակ: այսօր նամք մը կարտայայտէ վաղը հակառակին համոզուելու համար: չի կըրնար լաւին ու զէշին, վնասակարին ու օգտակարին, անկեղծին ու կեղծաւորին, սուսին ու ճշմարտին կտրուկ, որոշ ու վճռական դանդաղութիւնն ընել, ու պատճառ կըլլայ որ մեր մէջ ձեռնարկուած ամէն հաստատութիւններն ալ վաղանցուկ կեանք մը ունենան, յղուելի սողունները համարձակօրէն ու անպատիժ ածին, գործեն իսկական անձնուէրներու քով անխտիր, սեղանիսկ, շատ անգամ, լուսինն ու օգտակարները հալածուին, քանի մը սարսափելի ճիւղներ պաշտպանելու համար:

Հասարակաց կարծիքին այս անտուգութիւնն է որ, մեր մէջ շատ մը երկրի մութեանց ու ազդեցութեան ծնունդ տուած է: Մամուլը, զպրոցը, լսարանները, ամէնքը պէտք է ջանան հասարակաց կարծիքը կրթելու, ազնուացնելու, եթէ կուզեն որ մեր հասարակութեան մէջ չեն անհետանայ անկի նման սոճող վա-

տութեանց արուած կոյր կամանգիտակից քաջալերութիւնը: Պէտք է վարժեցնել հասարակաց կարծիքը լաւը քաջալերելու եւ զէշը արհամարհելու, բացէ ի բաց եւ առանց վերապահութեան: Հանրային արհամարհանքը ամենէն ազդու լքումն ու յուսահատութիւնը կը պատճառէ անոնց՝ որոնք ու է գրուածքէ չեն վախնար եւ որոնք շուտով ինքզինքնին պաշտպանելու համար բաց սիւնակ մը պիտի գտնեն իրենց առջեւ, երբ նեղը մնան:

Հանրային արհամարհանքը թող հալածէ զանոնք ամէն տեղ, երկրագնդին չորս անկիւնները հաւասարապէս:

Սմէն կողմ հայութիւնը պէտք է վարժուի գէշէն երես դարձնելու: Խաթեր համար կամ խղճութիւն, «մեղքնալով» պէտք չէ մեր արգահատանքը շոյալներ մարդու մը՝ որ իր գոյութեամբ պատուհաս մըն է արդէն, եւ որ արգահատանքէ ալ չի հասկնար, ու վաղը կրկին պիտի սկսի հաշուաւել, խածաւել, երբ քիչ մը ակռաները զօրանան ու հաստատ տեղ մը սկսի շինել աւսոր անոր միամիտ արգահատանքէն օգտուելով:

Հանրային արհամարհանք, ահա ամենէն ազդու ու ջախջախիչ պատիժը բոլոր այն ցածերուն, խարդախներուն, ժողովրդին անուսով խօսող ստախոսներուն, խաբեբաններուն, կեղծարարներուն համար, որոնք գեռ կը նկրտին գեր մը խաղալ հանրային գործերու մէջ: Հասարակութիւնը թող վարժուի անգամ մը իր արհամարհանքը նետել անոնց երեսին, ու պիտի տեսնէ որ այլ եւ այդ ցեցերուն թեւերը պիտի կտրեն, ու լքուած, պարտուած՝ պիտի հարկադրուին ձայնը քաշելու իրենց պատեանին մէջ ամփոփուիլ:

ՇԱՀԱՊ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 15 Յուլիս

Կառավարութիւնը երթալով իր բռնութիւնները սաստկացուց Մշոյ աշխարհի հայ ժողովրդեան վրայ: Չորս խորսերտարիներ դուրս բերաւ 50-ական հեծելա- զօրքերով, իւրաքանչիւրը զատ զատ հայ գիւղեր զրկեց, և «պի- րինճի ու իքինճի» խօսքերուն հրամանատարներն ալ 60—70 ոստիկաններով սկսան երկրին մէկ ծայրէն միւսը շրջիլ, նե- ղել ու շարշարել բնակիչները: Ասկէ զատ, կառավարութիւնը գրգռեց նաև քիւրտ համրութիւն հեծելազօրքերը, և ձգարանցի ա- շիւրէթէն Բէտու նատոն, հոչակա- ւոր իր գաղանթեամբ, 70—80 քիւրտերու գլուխ անցած՝ սկսաւ քայլել Մշոյ դաշտի հիւսիսային արեւելեան կողմի խարամէշ լե- ւան ստորոտը գտնուող հայ գիւղերուն վրայ: Իր առաջին յարձակումներուն զոհ գացին Մխաու, Գուրաու և Տիրիք, հայ գիւղերը: Գիւղացիները ընդդիմացան ու թող չի տուին որ վայրենիները գիւղ յտնեն, բայց Գուրաու, 4, Մխաու 2, Իսկ Տիրիք 4 մարդու կորուստ տուաւ: Այն ատեն «Իքինճի խօ- լի» միւտիւրը 70 ոստիկանով և խրսերտարին խալիլ էֆ. 50 զին- ւորով Աւրան հայ գիւղը կը գտնուէին: Երեք հայ գիւղերէն ալ շուտով մարդիկ զրկուեցան միջամտութիւն խնդրելու համար: Բայց անոնք գիտամար ժամերով ետքը ճամբայ կելլեն և կը հաս- նին շատ ուշ, երբ արդէն ամէն բան վերջացած էր: Եւ փոխա- նակ քիւրտերը հալածելու և ա- նոնց յափշտակած անասունները

ետ դարձնելու, անոնց ձգած պակասը կը լրացնեն և կը պա- հանջեն որ իրենց պէտքերը հո- գան: Միեւնոյն ատեն Ալի և Իպրա- հիմ Չէրքէզները շատ մը շէր- քէզներու գլուխն անցած՝ սկսան քայլել Աղջան, Ալիճան, Շէյխ- Լուսի և Ապրէլուհար Հայ գիւ- ղերուն վրայ: Քարկիոյ լեռանց կողմէն ալ Հասնանցի աշիւրէթէն Ռեզլոյի, Թրմըրիի և Տավրէշի աղաները, իրենց մարդերով կարշաւեն Յիրկիրդ, Խէյպիան, Մեղաի և Պաղլու գիւղերու վրայ: Երբ այս վերջին գիւղը կը հաս- նին նախ կը փորձեն ներս մըտ- նել և աւարառութեան սկսիլ: Գիւղին մէջ իրարանցումը կրս- կրսի: Բարբախտաբար նոյն մի- ջոցին ֆէտայի խումբ մը Պաղ- լուի կռնակը գտնուող անտուկ Սիրկի լեռան քարայրներուն մէջ պահուած էր: Երբ իրարան- ցումի ու հրացանաձգութեան ձայնը կը լսեն, կայծակի արա- գութեամբ գիւղ կիջնեն: Կռիւր կը սաստկանայ և քիւրտերը ֆէ- տայի երեւումէն սարսափահար քանի մը կորուստ տալով կը փախչին: Հիմա միւտիւրը, իր հետ գտնուող ոստիկանները ու խըր- սերտարին այս գիւղը եկած՝ քըն- նութիւն կը կատարեն: Դեռ քըն- նութեան հետեւանքը յայտնի չէ, անոր համար չեմ կրնար բան մը գրել, սպասելով քննութեան ար- գիւնքին: Եւ սակայն զինուորական մեծ շտրվում մը կը նշմարուի, բոլոր քիւրտ աշիւրէթները և կանոնա- ւոր բազմաթիւ զօրքեր դէպի մեր լեռները կը վազեն, կուզեն մեզի պաշարել: Բայց այս ան- գամ մեր ընելիքը գիտենք: * * *

ՍՕՏԻԱ 12 օգոստոս

Ինչպէս նախորդ նամակովս գրած էի, կառավարութիւնը պնդած էր թէ անպատճառ թաղ- խորհրդոյ անդամները պուլկարա- հպատակ պիտի ըլլան և թէ ընտ- րութիւնը պուլկարական օրէն- քով պիտի կատարուի: Բայց ցա- ւալի է որ Այց. հովիւը առանց կառավարութեան ոտնձգութեանց պէտք չունի, շուտ մը համա- կերպեցաւ և ընտրողական ժո- ղով մը կազմեց, որպէս զի ան- միջպէս ընտրութեան ձեռնար- կէ: Սակայն խեղճ ընտրողական ժողովոյ անդամները, եռուպա- տիկ ցանկ պատրաստելու համար ի զո՛ւր Դիոքրիւնէսի պէս՝ լապտե- րը վառած՝ պուլկարահպատակ- ներ կը փնտռէին, որոնք մի- եւնոյն ատեն ունենան պահան- ջուած հանգամանքները: Ինչ որ է, եռուպատիկ ցանկը պատրաս- տելով յայտարարեցին ժողովրդ- եան թէ՛ Յուլիսի 29ին ընտրու- թիւն պիտի ըլլայ: Սակայն հպա- տակի ու ոչ հպատակի խարու- թիւնը արդէն եղած երկպառա- կութեանց վրայ տեսնալով՝ ժո- ղովորդը բուլտրովին ցրտացուց Աղբային գործերէն, որով 150 ընտրողներէ հազիւ 48 հոգի մնա- նակցեցան շատ ապօրինի կեր- պով, և արդէն ընտրողներն ալ խմբովին հրաժարած են: Հի- մայ ազգային գործերը երեսի վրայ մնացած են: Չենք գիտեր թէ այցելուն ի՞նչ ընել կը մտա- ծէ, քանի որ մէկ քանի օրէն Թ. Բազարճը պիտի մեկնի, հոն ալ այստեղին չափ գործերը կար- գազրելու համար: Կը լսենք թէ առժամանակեայի երկու անդամները առիթէն օգ- տուելով մէկ քանի միամիտներ համոզած ու այց. հովիւին զրկած

են, որպէսզի կնիքն ու տեսա- րակները դարձեալ իրենց յանձ- նուի, մինչեւ ցնոր տնօրէնու- թիւն ազգին գործերը վարելու համար: Սակայն եթէ այցելուն, քանի մը գաւաթ պիտի ու քա- նի մը ֆրանք ժամացի համար զոչաքաղ Մարտիրոս աղբարին խորհուրդներուն հետեւի ու կնի- քը, տնտրակները յանձնէ, շատ մեծ կոխներ պիտի պատահին ու ինք պահաւ պիտի ըլլայ: Արդէն ժողովուրդը այն աստի- ճան զայրացած է անոնց դէմ որ մեծ մասամբ սկսած են պուլկա- րաց եկեղեցին երթալ: Այդ մարդիկը տակաւին առանց ա- մշնալու քանի մը միամիտներ համոզած են ըսելով թէ մինչեւ ցարդ եղած աղօթիւնութեանց պատճառը իրենց խորհրդակա- նն էր, այդ մարդը իրենց կար- դալ գրել չի գիտնալն օգտուե- լով՝ սխալ բացատրութիւններով կը խաբէ ու պաշտօնանական թուղթերը կնիքել կուտայ ելեր: Արդեօք ատմարդը եթէ հազար ֆրանքի պարտամուհակ մը ի- րենց կնիքել տար, պիտի կնիքէի՞ն: Ատոնք տկար փաստաշանու- թիւններ են, դրամական զեղ- ծումները ուղղակի իրենք գոր- ծեցին: Սակայն ցատալի է որ քանի մը խեղճեր տառնց կեղծ փաղաքշանքէն խաբուելով գա- ցած այդ մարդը եկեղեցւոյ մէջ ծեծած են, և հիմա խնդիրը գտտարանի յանձնուած է: Եթէ այդ մարդիկը բանտարկուին կամ տուգանքի ենթարկուին, ո՞վ է պատճառը: Անյեալ օր ալ հանրաժանութ անբարոյակները, ժողովուրդին աչ- քը մտնալու համար, այցելուին ըսած է թէ՛ տղը խնայողու- թեան պէտք ունի, հետեւաբար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿԻ ԽՂՃԱՆ, ՈՉ ԿԻ ՍԻՒՆ

XIV

(Շար. Ասխորդ քիւնե)

Փաստաբանը կոչոււմ ըրաւ դա- տաւորներու մարդասիրական ազնիւ ու վեհանձն սրտերուն, զորս արդարութիւնը կանչած էր դա- տելու չոթէ փողոցային ու ապականած գողերը ալ գերեալ հոյրենիքի մը յոյսն ու պարանքը եղող ինտրի- կէնդ երիտասարդները: Փաստաբա- նին խօսքերը ներկայ եղողներուն գուրջ շարժեցին, որոնք յուզուած ու ներշնչուած ծափահարեցին զին- քը: Երգուեալ զատաւորները խոր- հրդակցութեան սենեակը քաշուե- ցան: Դատաւիճիւրը գողութեան մեղ- մացուցիչ հանգամանքները ի նկա-

տի առնելով, օրէնքի տրամադրած տասնընեակ տարուան պատիժը հինգ եւ երեք տարի իջեցուց: Բազ- մութիւնը ուժգին ծափահարութիւն- ներով ողջունեց եւ փաստաբանին ձեռքը սեղմեց: Այս փաստաբանը նոյն ինքն Պո- թէլէ էր. որ Կալացէն յատկապէս այս գործին համար եկած էր: Ծրագիրը ոչնչանալով, խումբն ալ չի կազմուեցաւ. գողութեան զԸ- խաւոր մեղսակիցը Մաքեթօսեֆին էր (ծրագիրը ու գործիքները ան պատ- րաստած էր): Բայց ան չի ձերբակալ- ուեցաւ եւ ոչ ալ մատնուեցաւ: Եր- կար ժամանակ իր շարաքաղ ընկեր- ներուն բանար այցելեց եւ անոնց միջոց զի իր թիւններ տուաւ, քան- տին մէջ անոնց վիշտը կսփոփէր ծախսելու փոքրիկ գումարներ: Եւ յով թէ այն բարեբաստիկ կամարէն և թէ իր յաջողութեամբ ձեռք բե- րած թղթախաղի վստակէն, քանի մը ֆրանք ալ բարեգործ պուլկար- ներէն մուրալով: Անոնք անձկութեամբ կը սպասէին

XV

Սերպիոյ պատերազմ յայտարարելուն ժամին, որպէսզի իրրեւ կամաւոր երթան մասնակցին սլավական թըր- նամիւնի դէմ մղուելիք կռուին մէջ: Իրիկունը ընթանալով անիւս հիւ- րանոցի ճաշարանին մէջ հասնուած էին հայուկներէն մեծ մասը, որոնց Պրախլայի մէջ մօտէն ծանօթացանք: Պրըքըֆ շուտ շուտ ու յուզուած «Սթարա Բլանինայի» (*) վերջին թիւը կը կարդար: Ասոնց մէջը, Բուսիւէն նոր հասած պուլկար ու- սանողներ ալ կը տեսնուէին, քանի մը առաւ կամաւորներ իրենց սուպիակ կտաւէ բաճկոններով, մէջքերնին փոկէ զօտի եւ սպիտակ գիւնուորա- կան գլխաշկներով, որոնց վրայ կարուած էին կարմիր խաչեր, եւ եր- կու քարատաղցի տիտաններ Պոլիսէն եկած Սուլիւնայի ճամբով: Ատոնք

բոլորը Պոլսէն կանգ առած էին, այնպէսզի Սերպիոյ անցնելու համար Հազարկները առաջին անգամ ըլլա- լով ուսերը կը տեսնէին եւ անոն համակիր ու հետաքրքիր նայածք- ներ կարծակէին, զիտելով չէին կրնար իրենց զգացումներուն յազուրդ տայ: Բուսիւսի հետաւոր անկիւններէն եկած էին այս մարդիկը, սլավոնե- րուն հետ մահմետականներուն դէմ կուսելու, ասոնք ալ հետաքրքրու- թեամբ իրենց անձանթ խօսակցուե- րը կը դիտէին. անոնց խօսակցու- թիւններն մտիկ կընէին եւ ուսերէ- նի հոմանիւ: ու ըմբռնելի խօսքեր ընտելուն պէս, կը զարմանային եւ բարեբաստութեամբ իրարու կը շար- ցունէին—սես, եղբայր աս ալ ուս- տական է, ի՞նչ, չ'ես հասկնար: — Ինչպէս չէ, ասոնք մեր պուլ- կար եղբայրներն են, ուրիշ մը կը պատասխանէր որոնց պէտքի ազնուա- ստիմ գիծերէն եւ ձեռքերու սպիտա- կութենէն կը հասկնուէր իր ազնուա- կան գերդաստանէ սերած ըլլալը: Սա կուս Բլան էր, — Հապտամեք հիմակ ուր պիտի

(*) Քաղաքական թրքի, Պոլսէն հրատարակուած 1876ին Աթէֆան Պոլսէնէն (Բօքրիվիչիցացի):

վարժուհիին վաքանսի ամսականները պետք չէ տրուի : Այցելուն ալ բան մը ըրած ըլլալու համար, վարժուհիին կը պատասխանէ թէ վաքանսի ամսականները չի պիտի ստանայ : որով խեղճը կը ստիպուի կրթական տեսչին բողոքել ու կրթական տեսչին ազդու մէկ բողոքագրին վրայ, այցելուն կը համոզուի թէ՛ անպատճառ պետք է տրուի : Բայց դրամի չգոյութիւնը խնդիրը պիտի կնճառտէր, եթէ անգոյս երեւելի ազգայիններէն Տ. Մատթէոս Յակոբեան և Տ. Մուշեղ Արծրունի ազնուաբար միջոց մը չի խորհէին այդ ամսականները վճարելու : Արգէն անուբանայի է թէ՛ ամէն ասան, երբ ազգը թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս Տ. Մատթէոս Յակոբեանի պէտք ունեցած է ; միշտ իրմէ օգտուած է : տակաւին իր թաղականութեան օրէն 4-50 ֆրանքի անձելիք մը ունի ազգէն, թողունք ուրիշ բարեգործական նպատակներով տուածները :

Անցեալ օր պղտիկ միջոցէպի մը ներկայ գտնուեցայ : Հայ օսկերիչ մը, որ մէկ քանի տարիէ ի վեր քաղաքս կը գտնուի ու սանթիմ մը չէ տուած ազգին, եկեղեցւոյ մէկ անօթը կը նորոգէ ու փոխարէն դրամ կը պահանջէ և որովհետեւ պաշտօնական մարմին չիկայ մէջակող, իրեն կըսուի որ եկեղեցւոյ նուէր մը ըրած թող ըլլայ : Մեր պարոն օսկերիչը կոկսի եկեղեցւոյ մէջ սոսկալի հայհոյութիւններ տեղացնել ազգին գլխուն : Բարեբաղդար այդ միջոցին Տ. Մ. Յակոբեան վրայ հասնելով այդ անպատիւն գրամը կուտայ իր գրպանէն և կը ճամբէ : Այդ օսկերիչը դրամական տաղնապի

նիւթակաւածներէն չէ, ու ամէն զիշեր մեծ գրամներ կը ծախսէ անպատիւ վայրերուն մէջ : ԻՐԱՋԷԿ

ՏՄԱՆԱՄԵԱԿԸ ՌՈ. ՍՃՈՒՔԻ ՄԷՋ

Բացառիկ ու յարգելի պատճառներով «Գաղտնակցութեան» տանամանակի հանդէսին թէպէտեւ արտասահմանի ուրիշ քաղաքներու նման չունեցանք ճառեր, արտասանութիւններ, դաշնակի ընկերակցութեամբ երգեր, սակայն և ասոնց ամենուն ի փոխան վայելցիւնք իրատ հակիրճ ու արժէքաւոր բանաստեղծութիւն մը :

Ամսոյ 5ին կիրակի օր քաղաքիս Հայ Յեղ. Գաղտնակց. կօմիտէի ցանկութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ տեղւոյս Ս. եկեղեցւոյն մէջ. հայրենիքի փրկութեան համար զոհուող բոլոր նահատակներուն յիշատակին :

Տէր Մկրտիչ քահանան թէեւ գոհնակ լեզուով սակայն և այնպէս աւուղջ արամբարանութեամբ բացատրեց թէ՛ ազգասիրական ազնուագոյն պարտաւորութիւնը կատարողները միայն անոնք են որոնք մտայլ ազգաներու ժամանակ մինչեւ իրենց վերջին շունչը կռուեցան անվհատ կամքով մը, և այդ պիտիներու յիշատակին հայ եկեղեցին լաւ գիտէ արտաբերու մտածանքներ և հոգեհանգիստներ կատարել :

Եկեղեցական արարողութիւններէ ետք բակին մէջ խուռն բազմութեան մը ներկայութեամբ Տիար Զ. հակիրճ ու ազդու բանաստեղծութեամբ մը տանամանայ

Հայ. յեղափոխութեան պատճառութիւնը ըրաւ : Թուեց բոլոր այն անխուսափելի պատճառները որ ծնունդ տուին մեր յեղափոխութեան : Գիրաւի ըրաւ, եթէ հիմայ ակնարկ մը նետենք հայրենիքի վրայ, շատ սրտաճմրկ տեսարաններ պիտի գտնենք հոն : Սոխոյիսոյ հազարաւոր փրկանքներ, քանդուած տուններ ու արեւան գոյրչիւներով մթնոլորտ մը : Սոյն նիւթական ու անձնական փառանքները սակայն չեն կրնար մխտել այն բարոյական օգուտները որ մենք ունեցանք սոյն տասը տարուան շրջանին մէջ :

Երբ Անգլիա կը պարծենար բոլոր աշխարհի առաջ թէ ինք ծովերու ու ազգերու տէրն է, իսկ Ռուսիա՝ իր ձեռքին մէջ աշխարհի ճրգ մասը ունենալուն, մենք հայերս ստրկային համակերպութեամբ ներսողներ կը շուայէինք աշխարհի թէ Սուլթանի հաւատարիմ հպատակներն ենք, այսինքն գերիները :

Մինչեւ ութսունական թուականները Հայը եւրոպայի առաջը Արեւելքցի քծնող հրէան էր որուն ազգային զգացումի շերտնաւոր հաւատքը մեռած, դատապարտուած էր իսպառ ոչնչանալու :

Տասը տարուան պատմական սոյն շրջանին մէջ հայ ժողովուրդի աւանդական հաւատարմութեան հանգոյցը լուծուեցաւ շնորհիւ իրենց կեանքը փրկութեան սեպանին առաջ զոհարեող մաքուր հոգիներուն :

Այսօրուան հայը երեկուան սարուկը չէ :

Նոյնպէս մենք չենք կարող ըսու մասնացոյց չընել եւրոպական ազգաց այն խանդավառութիւնը ի նպատակ մեր գաղտնի, ի նկատի առնենք «Իրօ Արմէնիա»

ձեռնարկութիւնը ֆրանսական ազդու գործիչներու ձեռքով որ ուրիշ բանի հետեւանք չէ, եթէ ոչ մեր ազգային կոռնի :

Պ. բանաստեղծութեան քաղաքական այն օգուտները որ մենք ունեցանք կուէն վերջ :

Վերջացնելով իր խօսքը ըսաւ սուգի օրերու մէջ տօնախմբութիւն չըլլար : Օր մը երբ կը վերնան Հայրենիքի ազգաները և կը բացուի փրկութեան արշալոյսը այն ասան ազատութեան զալար պափնիներով անոնց յիշատակը կը տօնենք :

Խանդավառ ծափերով կը վերջանայ բանաստեղծութիւնը : Բազմութիւնը ուրախ արամագրութեան տակ կը սրտի :

ՆՊՊՊ
Ռուսչուք Տ օգոստոս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սամսոնի գաւառ. ժողովը պատրիարքարան հեռագրած է որ, Սամսոնի վիճակին առաջնորդ ընարուած է Տ. Յակոբ Աշոտ եպիսկոպոս Փափաղեան :

— Սալմաստէն «Մշակ» կը գրեն թէ քիւրտերը վերջերս շարունակ կը յարձակին Սալմաստի վրայ և մեծ կորուստներ կը պատճառեն : 50-60 զինուած քրդեր Գրիշկ գիւղէն 67 ձիափշտակներ են : Պարսիկ կառավարութիւնը թէեւ քանի մը ձիաւորներ պրկեր է անոնց ետեւէն, բայց իրենց քիչուրութեան պատճառաւ չեն կրցեր տարուած աւարը ետ բերել : Մինչեւ այժմ այս աւաղակները Սալմաստէն մօտ 2000 անասուն յափշտակներ են : Լուր տարածուեր է թէ 4—

կուսինք . Սերպիա թէ Պուլկարիա : — Ինչ Սերպիա, ինչ Պուլկարիա երկուքը մէկ է, ըսաւ քառասուն ասրեկան ոտս մը

— Չէ՛ սակայն այո, երկու սլավեան երկիրներ և ուղղափառ, բացարձակ կոմսը :

— Հոն ասոնք ինչ կընեն, չի՞ պիտի երթան Սերպիա, թուրքերու հետ պատերազմը սկսելու վրայ է, ըսաւ մէկը Ռուսերէն, պուլկարները ցոյց տարով :

Ազնուականը ուսերը վեր վերցուց, Ռուսնոյ մը դառնալով հայդուկները ցոյց ու ըսաւ :

— Անոնք այ Սերպիա պիտի երթան :

Կամը շուտ մը աչքերը ուսանողին ուղեց և քաղաքապարտութեամբ հարցուց :

— Դուք ուս էք : Ո՞ր տեղէն :

— Մակուայէն պուլկար ուսանողներ ենք : Հայրենիքի թշուառութիւնը մեզի հոս կանած է... Խօսակցութիւնը կոմսի ու ուսանողի միջև սկսաւ : Եւտով միւս բոլոր ուսանողներն ալ մասնակցեցան : Վերջին տեն-

դոտ լուրերուն վրայ կը խօսակցէին, պուլկարիոյ ապստամբութեան ու ջարդերուն և այն յոյսերուն զորս ազգը Ռուսիաի նկատմամբ կը սնուցանէ :

Ինչպէս նաեւ զօրավար Զէրնակ վին համար ևս : Աս մարդիկը առանց էթիքթի թու ներկայացումի արարողութեան իրար մօտեցան, իրար հասկըցան և սիրեցին : Սլաւեան ոգին անոնց սրտերուն մէջ նոր արտփիւններ արթնցուց : Անոնց աչքերուն մէջ կը կարգացուէր մէկ դաղափար, մէկ սիրտ և մէկ տառապանք : Երբայրական սիրոյ արասնհզուր աւելի խանդավառ և աւելի անկեղծ կըլլայ : Հայդուկները որոնք մինչեւ այդ տոտերը ուսերէն բաժնուած կը մնային և փափկանկատութեամբ անոնց կը նայէին անոնցին մօտեցողին : Ռուսերուն և իրենց մէջ նոր սլաւեան բարբառով նոր խօսակցութիւն մը սկսաւ բոլորն ալ ուսերէն խօսք մը ըսելու կը փափագէին, զի իրենք բան մը հասկըցող ցոյցնելու համար, կենսատու

զգացումը բոլորին ալ սիրող լեցուց : Կամը շամբանի զինի բերել տուաւ : Հրաշալի ըմպելիէն գաւաթները փրկ-

փրկեցան, ան իր գաւաթը անոնցով ոտքի կըսա ու մեզմ ձայնով աւ խօսքերը արտասանեց :

— Պարոններ այս երկրին մէջ առաջին անգամ ըլլալով պուլկար կը տեսնեմ, և կը յայտնեմ որ հողոյս բոլոր ուժովը սիրեց զանոնք : Այս սիրտեցուցիչ զգացումը որ զիս ձեզի կը միացնէր ձեր տառապանքներուն ու պայքարներուն պատճառովը երբ զեռ խմ հեռաւոր ծննդավայրս կը գտնուէի, հոս ձեզ հետ համացեղ ու տանջուող ազգի մը հետ շփուելով հարկաւարապիկ զօրացաւ : Ինչպէս դուք, մենք և ուսերս ալ արեան ու զոհի օգնութեան կերթանք մեր արիւնակից սերպ եղբայրներուն, որոնք քաջութեամբ պատերազմին դրօշը բարձրացուցին սլաւութեան վաղեմի թշնամին դէմ : Կը խմեմ սուրբ գործին կատարեալ յաջողութեանը համար, կը խմեմ Ռուսիաի երկու աւրիւնակից քոյրերուն, Պուլկարիաի և Սերպիաի համար... :

Ոչ տանջուող, սարսուցեցիչ ու խանդավառ աղաղակներով կեցցէնեով ուսին յուզիչ խօսքերը ընդուն-

ուեցան : Իսկ մը հայդուկներ որոնց մէջն էր նաեւ Պրէքով, փղկկեցան :

Ռուսնոյ մը ոտքի կըլլով պաւեան համերաշխութեան կենացը խմեց :

— Ուրա՛, պուսացին մէկէն քառասուն ձայներ :

— Փալա՛, պուսացին քարտաղցիները :

— Ժիվի՛ս՛ պուսաց ճաշարանապետը որ սերպ մըն էր :

Նոր շտմանիաի շիշեր բերել տուին : Դաւաթները փրկեցան ու փայլեցան, զօրաւոր զգացումներով ուսանող, երկու ուս : Պէպրօպիլին Բօրչէթօին մօտեցան սկսան փոխադարձաբար զիրար համբուրել : Մօնթէնկի րոյցիները կը պուսային ու հայհոյանքներ կը տեղացնէին թուրքերուն դէմ որոնք ուղղափառ սլաւներ կենդանի կայրէին : Դուրը զարնուեցաւ և Մ. քէլտօնաքին սովորականին պէս ազմուկով ներս խոյացաւ ձերքը թերթ մը բանած :

Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Եւրոպական լի)

500 թրքահայաստանի քրեական ընդհանուր օրենքի համար, կառավարութիւնը ունի միջոց չէ խորհած եղեր շարիֆին առաջ քառնելու համար:

— Թիֆլիսի հայոց թատերասէր ընկերութիւնը մտադիր է աշխարհ շքեղ ներկայացում մը տալ Արտաշեսի յիշատակին: Հասոյթը պիտի յատկացուի բնակչութեան հարկ եզամ թատերական պէտքերը հայթայթելու:

— Մշակութի Մարման թղթակցիցը կը հաղորդէ թէ իրենց պատկեր արարքներով վերջերս ալ և այլ տարածայնութեանց տեղի տուողները 10-12 օտարական և անձանթ արհեստագործներ, որոնք (բազմաթիւութեան համար Մարմանտ եկամ են: Հետեւաբար ի վերջին այն նպատակաւոր յայտարարութիւնները զորս բրին արտասահմանի կարգ մը թերթերը, յեղափոխական կազմակերպութիւն մը արտաստորելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Ֆրնս. կառավարութեան և թուրքի միջև ծագած միջադէպը վերջապէս կարգադրուած ըլլալ կը թուի:

Պահ մը կարծես վերջնական խզումը անխուսափելի էր: Սուրբանը խոստումներ ըրաւ և շաճկացաւ ժամ մը վերջը զանոնք զըրժելու: Ֆրնս. դեսպանը, որ երբէք Սուրբանին թթու երեսցուցնելու չէր վստօնուած, փրփրեցաւ ու պատրաստուեցաւ մեկնիլ: Միւս կողմէ Միւնիք պէյ որ բարիպէս բացակայ էր, կը ստիպուէր արտասահման մնալ մինչև միջադէպին փակումը: Բայց ահա Սուրբանը անգամ մըն ալ խելքը գլուխը կը ժողվէ և վերջին պահուն իրատեսով մը Ֆրնս. քարափ ընկերութեան ազատ իրաւունք կուտայ ըստ առաջնայն իր գործառնութիւնները շարունակելու և կը յայտարարէ թէ ինք հրաժարած է զանոնք գնելու մտադրութենէն:

— Ահա տարիկ այս խնդրին վերաբերել վերջին մանրամասնութիւնները:

Քոնսթանտնուպոլիսի օրէնքը և բանակցութեան մտնել թուրք կառավարութեան հետ և արգիլած էր իր թարգմանին երկրորդ հետ յարաբերութիւն պահել, որովհետեւ Սուրբանը կը շանտ քարափներու և պարտքի խնդիրը իրարմէ անջատել և կուզէր որ յանձն խումբ մը կազմել այդ վերջին խնդիրը կարգադրելու համար: Բայց Քոնսթանտնուպոլիսի օրէնքը և կը սպասէր իր կառա-

վարութեան հրահանգներուն մեկնելու համար:

Սուրբ. օրենք. 23ին Քոնսթանտնուպոլի կառավարութեան հրահանգ կը ստանայ թողուլ Պոլիսը: Ասոր վրայ Սուրբանը կաճապարէ ամէն կերպով համակերպիլ Պոլսի սուլթանի պահանջներուն:

Քոնսթանտնուպոլիսի պահանջէն ընկերութեան կրամ վնասներուն համար, գործառնութեանց ընդհատումին հետեւանքով:

— 27000 հրացան Ալպանիա մտցուցեր են, առանց թուրք կառավարութեան գիտութեանը:

— Ինչպէս արդէն մեր թղթակցին վերջերս հաղորդած տեղեկութիւններէն կը յայտնուէր Մուշի և շրջականերուն վիճակը շատ տագնապալի կացութեան մը ենթարկուած է: Բազմաթիւ գիւղեր աւարտութեանց զոհ գացած են, իսկ կանոնաւոր զօրքերը սասունի լեռնային մասերը պաշարման մէջ գրեթէ են, բնակիչներէն պահանջելով որ ձգեն իրենց բնակութիւնները և դաշտը լքեն: Բայց գիւղացիք ամէն զնով կընդդիմանան և չեն ուզեր իրենց ամուր գիրքերը դաշտին հետ փոխել:

Կը հաղորդեն նաեւ թէ Ղուլթիլի և շրջականերուն մէջ մեծ խռովութիւններ տեղի ունեցեր են:

— Քոնսթանտնուպոլիսի օրենքը է նաև Ատարազուրի ճահիճներու խնդրին համար, զոր թուրք կառավարութիւնը փարսաններու վարչութեան յանձնած և յետոյ ետ առած էր: Այդ վարչութիւնը 27000 ոսկի հատուցում տապալու ճահիճները յանձնելու համար:

Քարափներու ընկերութիւնը իրր վնասի հատուցում 700000 ֆր. տապալու է Բ. Դանէն:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Յառաջիկայ և Երոպական օրէնք. 18ին Ռուսիոյ Չարը Ֆրանսա պիտի այցելէ և Տիւնզիքի մէջ ներկայ պիտի գտնուի կատարելիք մեծ զօրահանգէններուն: Եւրոպական թերթերը զանազան կարծիքներ կը յայտնեն այս անսպասելի այցելութեան առթիւ, բայց արդէն ամենքն ալ կը կարծեն որ, պէտք չէ այդ այցելութեան քաղաքական նշանակութիւն տալ: Ռուսական թերթերը զայն կը նկատեն իր գրական սպառնալիք մը Ֆրանսիոյ զինակցութեան անքակտելիութեանը:

Գերմանիոյ մէջ այս լուրը խաղաղութեամբ ընդունուած է: Վիպէթըրը իր կրթութիւնը չի կրնար խողովել ոչ Չարին Ֆրանսա ճամբորդելէն, ոչ ալ Անգլիոյ և Գերմանիոյ զինակցութիւնէն: Չարը Ֆրանսա գալէն առաջ Գերմանիա ալ պիտի երթայ և Տաննիկի մէջ զօրահանգէններուն ներկայ պիտի ըլլայ:

Թ Ր Ա Ն Ս Ղ Ա Ւ

«Տէլլի Մէլլո» կըսէ թէ ժամանակը եկած է այլևս պատերազմական վիճակը դադարած համարելու, և խորհուրդ կուտայ Պօէրները քաղաքային օրէնքին համեմատ իբրև պարզ մարդասպաններ դատելու:

Նոյն թերթը կը հաղորդէ նաև որ Պօթա յարաբերութեան մէջ է եղեր լորտ Գիշնիքի հետ, այս վերջինին հրատարակած յայտարարութեան առթիւ:

— Ռամկավարական ընկերութեան ներքին գործադիր մարմինը բողոքէր է Լօրա Գիշնիքի վերջին յայտարարութեան դէմ, զայն մեծ ազդի մը անարժան համարելով: Իր բողոքագրին մէջ յիշեալ մարմինը կը պախարակէ կառավարութեան անարգ քաղաքականութիւնը, որ Միացեալ թագաւորութիւնը բոլոր ժողովուրդներու աչքէն ձգեց:

— Քիշնիքի յայտարարութիւն առիթ տուած է Պօէր պետերու բողոքներ: Տէլլարի զօրավարը հակարակ յայտարարութիւն մը հանած է, որ կը զգուշացնէ պօսթները Գիշնիքի դէմ, և կախի շարունակելի կը յայտարարէ: Պօէրներու կուսակցներուն դէմ խտուածները կը շարունակուին: Միտլլուրկի մէջ 40է աւելի անմեղ մարդիկ որտապարտուած են, ուր 66 հոգի ալ որոնց մէջ 6 կիներ կան, դատի քաջուած են:

Պիւրկէրգորքի մէջ 450 հոգի դատապարտուած են մատուցեալ ամբաստանութեամբ:

Չ Ր Ա Ս Ս Ա Ն

Լի Հունկ Չանկ ինսուցեր է Բէքի ղեկավարական մարմին թէ պատիժներու յաւելումական ցանկին և ընտելութեանց ընդհատումի մասին կայսերական հրավարողները Սինկանֆուէն եկած են: Չէնքերու ներածումը արգիլող հրովարտողն ալ խկոյն պիտի հեռագրուի:

Այն պաշտօնեան որ ձարնի Միքստօին պիտի երթար յայտնելու, Չինաստանի ցուակցութիւնները ձարնի ղեկավարութեան սպանման առթիւ, Շանկիայ հասեր է, ուր հրաման ստացել է կանգ առնել: Այս պաշտօնեան նախկին Պօքսեր մը ըլլալով կը վախցուի որ ձարնի մերժէ զայն ընդունել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Բարիկեան պանթաներու սէնտիքային երկու պատուիրակներ Սօֆիա եկած են փոխառութեան խնդրին առթիւ քննելու համար ծխախոտի մեղմանը հին երաշխաւորութեան պայմանները: Ասոնք պիտի ուսումնասիրեն երկրին օրէնքները և պիտի այցելեն այն նահանգները ուր կը մշակուի ծխախոտը:

Ա Ձ Դ

Տեղւոյս Ս. Լուսաորչեան երկուսն վարժարանին համար վարժուհի մը պէտքը զգալի ըլլալով, որ կարող ըլլայ երկրորդական դասեր աւանդել և միանգամայն քաջ հմուտ ձեռագործի, այդ պաշտօնին պատրաստ անձներէն կը խնդրուի ուղղակի հոգարարութեանս պիտել: Ամսականը գոհացուցիչ:

Ի դիմաց Իսթիքի հոգարար Մ. Սուխիեգեան

ԽՐԱԿՎՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը սպառնալու ռուս լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութեան, հարսանեկան հրատարակչի, մահազգ:

Գիշերը յոյժ դուրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՈՒՆՉՆՆՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՒՆ

Թ Ս Ս Ա Ն Ա Կ

Երկամեայ դրական գիտական և գեղարուեստական հանդէս:

Խմագրութեամբ Ս. Փ. Հախումեանի հրատարակուած է Ա. թիւը ճախագոյն պարունակութեամբ և 88 էջերով, տարեկան բացնելուն է 25 ֆր. դիմել խմագրին, 64, ընթրու-Պէրնար

Ա Ձ Դ

Կը ծախուի 1896ին փարս. 2ին իշխան Պօրթի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրութիւնը 1—5—15—25 սանդիմ:

Իրմիլ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐՍՏԵԱՆ վառնա

ԵՒՐՈՊՈՍԵՒ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու և առհասարակ ամէն տեսակ գիտում ընելու համար պէտք է գրմիլ հետեւեալ հասցեով Իւնիոն ճե Չիլիսիսիս Ա.Մ. Լիօնք րիւ սր Լիֆոլ սր Շիւրի 2

Սուխ ժբնէ

Կարգիլի Յանձնաժողով

ОТГОВОРНИКЪ:

Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна

ԲԱՐԻՉԵԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՆԵՐԵՍ ԻԱՁԱԳՈՂԸ ԵՒ ՊԱՏՈՒԱՌՈՒ ԺԻՎԵԻՐԸ

Ա.

Յոգիական Իսկաններ և Արշակ Զ- պաննան արքայազնները և նրանց անունը և նրանց անունը և նրանց անունը...

Այս շարքում ևս չկարող ենք չհիշատակել զուգահեռաբար ևս չկարող ենք չհիշատակել...

Իրենց կասկածելի ազգային գործունեությունները արտաբերում են...

Կասկածներ ազգային կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Կասկածները ևս չկարող ենք չհիշատակել...

Բ

Բարիզի Հայկական Միությունը կազմավորվել է...

Բնկերությունները համարում են...

Այս նորակազմված մասնաճյուղը կուսակցության...

Ուսումնական կազմակերպությունները...

Ուսումնական կազմակերպությունները...

Ուսումնական կազմակերպությունները...

Ուսումնական կազմակերպությունները...

Ուսումնական կազմակերպությունները...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Իսկանները ևս չկարող ենք չհիշատակել...

Միև կողմից լաւ բարոյական մը...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

Պէրաքէն, որուն անուակ պիտանէ...

(*) Մենք չուզեցինք Ա. Զօյանեանի...

Պատույ առեւտրական գաղութները...

Պատույ առեւտրական գաղութները...

նախ զժամանակէն և զՂամբարօք, այդ մարդոց հետ գործակցելէ, այս վերջինները ազգային գործով զբաղեցնելու իրենց այս ուշ զարթոնումին մէջ շարժանքներու բոլոր փափկանկատութիւններով, և չհաստատուելու անոր իրենց թմբուկներէն ու իրենց խնդրանքներ վրայ իսկ Պրք. Գալիաք-ճեան իրենց ու իրենց ընկերներու կասկածները դրաւ որ կը հարգուին: Զօպանեան Ա. և Իսկէնտէր Յ. ծանր ամբաստանութիւններու տակ, փոխանակ անմիջապէս հետանալու այդ Միութեան, կը զիջեն ընդ հոգի իսկ Պատուոյ ատենան առաջարկել, իրենք իրենց կողմէ, բան մը որ «գող սիրտը դող» սկզբունքը արդարացուց:

Պրք. Թամազէֆ և Ղամբարով իր պաշտօնակիցներ պէտք էր որ Զօպանեան Ա. ի և Իսկէնտէր Յ. ի պաշտպան դատաւորներ կանգնէին, բայց այս պաշտօնը սկիզբէն անոնց կը զբաղուի ու իրենց կը հարգուի: այս վերջիններու կողմէ իր դատաւոր-իրաւարար բարեգործական Պ. Յովակիմեանը, որ վնասակա ներպտիվ մեծ է այդ առաջարկը, իր բանաւոր պատճառները ունենալով անտարակոյս: Զօպանեան Ա. և Իսկէնտէր Յ. ճարահատ նորէն իրենց երկու պաշտօնակից ընկերներու գրիւղ կիցնան, ուստի կը մնար պրք. Գալիաքճեանի և Գայանեանի իրենց երկու դատաւորները ընտրել: Այս պարտնէրը կը գոհանան մէկ հատով մը, որովհետեւ իրենք երկուք մը չունէին իրենց ամբաստանութիւններու ճշմարտութիւնէն ու կրնային իրենց դատաւոր-իրաւարար Պ. Միսաք Պաղասարեան (Համալսարանի Տնօրէնը): Զօպանեան Ա. այդ անունը ընելով կը սարսափի, որովհետեւ իր բոլոր ազնուութիւնները այդ պարտնէն աչքէն երբէք չէին վերապահ ու իր բոլոր գոյներով անոր ծանօթ էր. կը դիմէ իր իրաւարարներուն որինքնէն պրք. Գալիաքճեանէ և Գայանեանէ ուրիշ մը ընտրել: Այս վերջինները կրնային ուրիշ մը Պ. Մարտիկ Մինասեանը, աւելցնելով որ ինչէն այս անձնաւորութիւնն ալ Զօպանեան Ա. ին անսխորթ թուի՝ իրեն կը թողուն իրենց համար որ և է մէկը ընտրելու: Այսպէս ամբաստանողներու կողմէ մէկ և: ամբաստանողներու դատելով երկու, ընդամենը երեք դատաւորներով պատուոյ ատենան կը կազմուի:

2.

Ամբաստանողները. — Ա. Զօպանեան կամբաստանուի 1. փողոցային անբարոյականի մը տիպար, 2. որուն կը միացնէ նուազոր փաշայէն գրքի հրատարակութեան համար դրամ շարժելու խարդախ գրութիւնը, 3. իբր ազգային դատը չհարգող անխիղճ սինթոր, գնելով իր թերթը կաւաճարութեան մը տրամադրութեան տակ, եթէ այս վերջինը թողատրէր անոր մուտքը իրեն երկրին մէջ: Ե. Իսկէնտէր կամբաստանուի, 1. հաւաքել խոշոր ազգային գումարներու, որոնց հրապարակային հաշիւը ցարդ խնամորէն մերժած է ներկայացնել, 2. երկրի մը ու կասկածելի անձ որ յեղափոխականները յայտնորէն հաւածելով վերջ անոնց հետ ալ գործակցելու էր իր անունին փառաբանումը կանխատեսած է, 3. կողմակալ մարդ, նորակազմ Հայկական Միութեան մէջ իր արքանեակները հրաւիրել միայն ջանալով:

Աւելցնենք որ Ե. Իսկէնտէր այս նորակազմ ընկերութեան մէջ ներկայութիւնը անոր յաղորդութեան փոխանակութեամբ էր, որովհետեւ բարեբար հայ մը իր 25 ՀԱԶԱՐ ՐՈՒԲԼԻՒՆ նուիրատուութիւնը՝ այդ իսկ պատճառով մերժած էր նորակազմ ընկերութեան յատկացնել:

— Աւելին է հոս ճիշդ, վեր հանելու միջադէպ մը որ իր բարձրագոյն կարեւորութիւնը ունի այս պատուոյ ատենանին ամբողջ պատմութեան մէջ: Ինչ մը վերելք ըսինք որ Պ. Մինաս Չերազ և և Միութեան անօրէն-ծողովին անգամ ընտրուած էր: Երբ այս ամբաստանութիւնները կը լսէ, անմիջապէս անձամբ կը դիմէ Պրք. Գալիաքճեանի և Գայանեանի և կը խնդրէ անոնց ապացոյցներ տեսնել, որովհետեւ հրապարակապէս որչափ գրիտենք Պ. Չերազ խոսելի չէ ճիշտ իր քրոնիկոսով, ազգային գործերու մէջ գտնուող այդ Յ. Իսկէնտէր և Ա. Զօպանեան կոչուած երկու խառնակներու առջև: Ենենելով վաւերաբանութիւնը մեր ազգային դատին նուիրուած այդ ամբաստար գործիչը այնքան կը յուզուի որ չի վարանիր անմիջապէս հրաժարուիլ և իր հրաժարականը լաւ կ'ոնական ոճով մը ուղղել փոխ-նախագահին, փոխանակ արտաւարուած նախագահին որ Ե. Իսկէնտէրն է. «Այլ ևս իրեն համար անկարելի գտնելով այդքան կեղտոտ մարդոց հետ գործակցելը բնականաբար»:

Ե.

Պատուոյ ատենան և լիմիտները. — Նախ կը դատուի Ա. Զօպանեան. կը հաստատուի որ այս առան Արաօի Ալեքսանդր անուն գրքին թարգմանութեան համար ստացած է նուազոր փաշայէն 500 Փր. ու անոր տպագրութեան համար 2000 Փր. Զօպանեան Ա. հակառակ փաշային ցոյց տուած այնքան բարի տրամադրութեան, այդ 2000 Փր էն չստանար 300 Փր. ի շափ գրպանել և մնացածն ալ կրկին ամբողջովին ծառայեցնել իր պէտքերուն, գրքին տպագրելին որ և է ստնթիմ չի հատուցանելով իսկ:

Կը յայտնուի՝ պատուաւոր բայց անուղակի վկայութիւններով, թէ Զօպանեան Ա. մտած է սղջ վրէժ գործը չափազործելու նպատակով՝ օտար կառավարութեան մը հետ թղթակցութեան: Զօպանեանի երկու իրաւարար դատաւորները հակառակ որչա վճիռ մը արձակելու համար իրենց թմբուկ բուր ճիշդին երկուք բարակ բացատրութիւններու մէջ իրենց համար կրկին դիմելը մը կը ինտուեն ու ջանալով խիչ իրակաւութեան առջև չեն կորնար խուսափիլ ու չի յատարարել թէ Զօպանեան Ա. կրնար աւելի «պնիւ կերպով գործել ինչ որ չէ ըրած» և թէ գրքին տպագրութեան ծրարին և աւելուած գրումին մէջ «տարբերութիւն» մը կայ: Մինչ Զօպանեան Ա. ի դատաւորները կանճակեան և չեն կրնար «անուղար» ու «նիւզ» դուրս բերել իրենց պաշտպանութիւնը որ պատուոյ խնդրներու մէջ ապաստարանութեան անհրաժեշտ պայմանն է», երրորդ դատաւորը իր գերը աւելի կորովով և պաշտօնօրէն կը կատարէ՝ յայտարարելով թէ «նուազոր փաշայէն գրքին տպագրութեան համար տուած գումարը Զօպանեան 236 Փր. չափազանցած է և ուրիշ բազմութիւն գեղծումներ գործած է միեւնոյն ատեն»: Այս դատաւորն է գարձեւը որ մատնանիչ կընէ «սու-

զանթ անարեւնորոյ թէ օտար կառավարութեան մը հետ Զօպանեանի թղթակցութիւնը եթէ չէ հաստատուած՝ անոր համար է որ վկայութիւնները, թէ և իսկապատուաւոր անուղակի էին ինչ որ բնականաբար «կատարածելի ըսելը կը նշանակէ»: Զօպանեան Ա. այս ծանր մեղքերուն վճիռները այսքան ծանրորէն չափելի չեայ, «ցած ստախոսի» մը տիպարն ալ միեւնոյն ատեն կողմագուրէ, յաճախ «սուտեր» խօսելով պատուոյ ատենանի առջև, որոնք կը բռնուէին իր մէկ ձեռագիր նամակովը, զոր ձեռք ձգած էին Պրք. Գալիաքճեան և Գայանեան:

Ու այս ջանքերու մը կը տօնուէր պատուոյ ատենանի անգամներուն առջև և ի ներկայութեան երկու պատուաւոր անձերու որ հոն կը գտնուէին:

Ե. Իսկէնտէր սոսկալի կերպով ծանր կը զգայ իր վիճակը: Խաչագործներու տուած իր անունը գրամ հաւաքելու. այս պարագան իր կցիտուր բացատրութիւններով գոցուած կը համարին ամբաստանողները, անոր գաւառներու ապագան ի նկատի ունենալով: Ե. Իսկէնտէր «երկար չունչ մը կը քաշէ», ու այդ հրճուանքին մէջ կը խոստովանի թէ. «այս ինքը որ ես է հաշիւ տուած չէ ազգին, այն գումարին համար, որ «հարկը հազար Ֆրանքի կը հասնի և սր երբեմն իր յով հաւաքուած էր»: Ինչու... Այդ հարցումը ցարդ որոշ պատասխան մը չէ ստացած: Միայն Իսկէնտէր Յ. կը յայտարարել թէ «այդ գումարը ինչպէս եկած այնպէս գացած էր» և թէ ինք այդ 100,000 Ֆրանքին համար մասնաւոր սուտը բռնած չէ ու անոր հաշիւը իր անձնական հաշիւներուն հետ խառնուած է:

Մինչ անկէն ոք, երբ քիչ մը պարտաճանաչութիւն ունի, խոյս կուտայ ազգային գրամներու պաշտէ Ե. Իսկէնտէր չորս ձեռքով վրայ կ'յիշայ, անոնց հաշիւները այնպէս կը յայտարարէ թէ իր անունը և այդ բանը դիմաքը որ և է կերպով չի խոսովը: Եթէ ենթադրենք թէ Ե. Իսկէնտէր «անհոգ» գտնուած է հաշիւ բռնելու, պիտի ըսնէ որ «ոճորագործ» անհոգութիւն մըն է այդ Միւս կողմէ ո՞վ կըրնայ երկուսից թէ հաւաքուած գումարը ճիշդ ու ճիշդ գոցած է պէտքերը առանց մէկ սանդիւկ պակեւելու (զոր անուշառ Իսկէնտէր իր գրպանին ամբողջացուած է և զոր յայտարարել իրենց համար խիստ մեծ փառաւորում մը) պիտի ըլլար, եթէ չէ աւելցած:

Երկու դատաւորները կը վարանին դարձեալ, ինչ ըսել, ինչ վճռել ու ապա կը բացատրեն, Պ. Ե. Իսկէնտէր ինքզինքը «քառ բաւականին» արդարացուց. ինչու ոչ «քոլորովին» ու «սանկ ու նանկ» արդարացուց: որովհետեւ այդքան միայն կարելի էր: Պատուոյ ատենանի մը վճռական դերը իրենց վրայ աւելող դատաւորներու պատասխանատու գրութեան ծանրութեան քանակը եթէ լիովին ըմբռնած չըլլայի, այսքան ըլլոյ ճշմարտութեան» և բուսական խոստովանութեան առջև քուրվարք պիտի անուանելի, առանց վարանելու, Թամազէֆ և Ղամբարօք, իրենց ստանձնած պաշտօնին ողորմելի կերպով կատարած ըլլալուն համար: Սա-

կայն եւ այնպէս չափուի կրնամ զանոնք երբիք անաչառ անձեր նկատել, տեսնելով այն շոշափուի ճիշդ որ բերրագացած է իրենց, տյապէս բաժն, վճիռներուն մէջ: Մինչդեռ Պ. Մարտիկ Մինասեան, «արկ գտած պահուն, յստակ և մաքուր կերպով կը մասնանչէ թոյլիցները և կը դատապարտէ ինաստայից կերպով գեղծումները, մեղքերը: կը վճռէ. «Ե. Իսկէնտէր ազգին նաշիւ տուած չէ, ինչ որ պարտ էր ընել»: «կողմակալ գտնուած է, Հայկ. Միութեան կազմակերպութեան մէջ»:

Ը

Անկողմաւոր. — Ա. Զօպանեանի վրայ կը ծանրանան հետեւեալ ջանքերի իրողութիւնները՝ առաջին, 1) թէ նուազոր փաշայէն Ալեքսանդր Գրքին թարգմանութեան իր իրաւունքը 500 Ֆրանք տուած չէ յետոյ, անոր տպագրական ծախքը և 236 Ֆրանք չափազանցած է: 2) այդ գրքին տպագրական ծախքը և չափազանցութիւնը ընդամենը 2000 Ֆրանք, իր անձնական պէտքերուն ծառայեցուցած է: 3) պատճառ եղած է որ գրքերը բանտարկուած մնան ու ազգագուտ նպատակով իր նպատակին չի ծառայէ: 4) բռնուցած է հեղինակին, Պր. Աղասիին իրաւունքին վրայ, որովհետեւ գրքին չը ծախուելովը՝ հասցիքը չբացած է և եթէ մի քանի օրինակ ալ ծախուած կայ, արժէքը տպագրելու վար գրած է: Երկրորդ, կատիածելի երեւցած է իր ազգային գործունէութեամբը և շատ ալ սքանչելի բարոյական մը և նեցած չէ:

Ե. Իսկէնտէրի վրայ կը ծանրանան հետեւեալները, առաջին՝ 100000 Ֆրանք հաւաքուած է իր ձեռքին տակ, որուն հաշիւը երբէք տուած չէ ազգին: Երկրորդ՝ կողմակալ ողորմ մէկն եղած է: Մեր եզրակացութիւնը երկար չի պիտի ըլլայ: Պատուոյ ատենանի երկու դատաւորները բացատրութիւններու մէջ փնտռելով իրենց արձակած վճիռներու պատասխանատուութիւնէն զերէն հողու ճարը, եղած են երկուսի և կողմակալը: Ընթացք մը որուն վրայ մեր հայեցողութիւնները որոշ կերպով պարզած ենք, պատուոյ ատենաներու վրայ վերը քանի մը խօսքը բնականաբար:

Մէկ կողմէ այդ երկու դատաւորներու որ և է կերպով Զօպանեան Արաօիին ու Իսկէնտէր Յովակիմի «մարդու մարդիկ էք եզեր, եկէք ճակատելով պաշտենք» չը կարենալ ըսնելին ու գտնուի վարագուրի տակ լիովին դատապարտելին, միւս կողմէ Պ. Մարտիկ Մինասեանի իր պաշտօնակիցներուն արձակած վճիռներն պարզաբանելու համար տուած գաւառակարտից բացատրութիւնները, վերջապէս առաջիններուն վարանտու և երկրորդին հասուն վճռականութիւնը, մեզի ամեն վաւերականութիւն կուտան թէ ամբաստանեալ երկու պարտները իրենց դատապարտութեան տխուր կնիքը աւելուցնուցած են իրենց ճակտին վրայ:

Ինչպէս ըսած ենք, կը կրկինք, պատուոյ ատենաններու մէջ պէտք է շոշափուի անպարտաւորութեամբ, մեկու մը պատուը փրկուած նկատելու համար: Այստեղ արձակուած վճիռներու մէջ ամբարիտիզմ արարքի միակակարկն իսկ ունարողմակալ ճշմանկարիւն ունի: Հոն քուէի սատարութիւնը, եթէ նոյն իսկ այս առա-

ւելութիւնը: բացարձակ անպարտութիւն հաշիւէ ալ, այնքան մեծ արժէք ունի: Ե. Իսկէնտէր և Ա. Զօպանեան, եթէ այս բոլորը ըսածնիս մեղմացուցիչ պարագաներ ալ նկատենք, ոչ միայն հետու են մեղմացուցիչ պարագաներ ունենալէ այլև ուղիղակի, վճռապէս, դատապարտուած են, իրենց վրայ կ'զայ ամբաստանութիւններու մէջ առհասարակ: Դատաւորներէն ոչ մին և ոչ միւսը պարզակնարկներով չեն գոհացած, այլ «ծանր կը իրաւաբանութեամբ անորոգը դատապարտութիւնները ըրած են: Իրք, կը ցուցնէ որ սյգքան տխուր հետեւեալք մը ունեցու պատուոյ ատենան» Պ. Իսկէնտէրի և Ա. Զօպանեանի համար: Թաւառակն է ալ կարծեմ, որ լսեն մեր խրատին. — հետեւալ «անմիջապէս» ազգային գործունէութեան շրջանակէն ու իրենց գործերով լոկ գրապիլ: Եթէ երբէք վերադառնալու յետոյ, ու զեն իրենց խանդավառ մեկնակող ու մեկնակող շահակութիւնները շարունակել հարկաւ: այս սնգամ, սպագան աւելի սնոգոք պիտի գիտնայ ըլլալ իրենց նկատմամբ: ու իրենց զղումը ու չ մնացած ու կուրուտի աւաղանք մը պիտի ըլլայ միայն, այն ատեն...»

ՊՈՂՊՈՍ Բորիկ 5 Օգոստոս 1901

(*) Պատուոյ ատենանի խնդրին համար 1901, Յուլիս 31-ի երկուսին «Կրան տ'Օրեան» շնորհակալ արահին մէջ Բարիկաբանակ հայոց դատարանին ընդհանուր ժողովը դուրսուցուց: Հոն հրապարակ գրուած յայտնութիւնները, իրենց ըրչութեամբ որոնք եղած էին Պ. Մ. Թամազէֆէն մասնաւորապէս Պ. Գալիաքճեանի, իրաւ տխուր գաղտնիք մը կազմել տուին այս անձնաւորակ անարկուն (կորովով և ոչ մարմնով անտարակոյս) դատաւորին վրայ: Այդ ժողովին վրայ կը խոսնէր զալ անգամ: Գաղթականային ժողովը, մասնաւորապէս 150 հոգի, միտմայն (4-ն բացատրութեամբ) ընդունեց այն օրակարգը որ առաջարկուեցաւ Զօպանեան Արաօիին նախկին բարեկամներէն մէկին կողմէ, այսինքն կազմալուծել Հայկ. Միութեան արդի Տնօրէն-ժողովը և «անմիջապէս» ընդհանուր ընդհ. ժողովով մը նոր ընտրութիւններու ձեռնարկել անյայտալ: Այսպէս, Բարիկ հայերը իրենց այս որոշուելով, միանշարժ, ընդունելով ամբաստանականութեան պարտութիւնը, հաւաքական կերպով դատապարտութեան վճիռը որոշայ Յ. Իսկէնտէրին և Ա. Զօպանեանին գլխին, որոնք պիտի շահային, անտարակոյս, երկու «երկուսի» դատաւորներու երկուսու կարծիքներու տակ պատապարտուին: Թատաւորապէս մ'է միեւնոյն ատեն, այս պատակաւ ժողովին վախճանը, թէ Բարիկ հայերը կը պահեն ազգային փափուկ զգացում մը իրենց մէջ, ու գիտեն պատակ իրաւագործներու ու ճիշդութիւնները:

Նոյն